

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան
պետական համալսարան» ՊՈԱԿ-ի
ռեկտորի 29.02. 2016 թ. թիվ 112 Լ/Կ հրամանի

Կ Ա Ր Գ

**ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ**

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից
Արձանագրություն թիվ 2 25.02.2016թ.

Վանաձոր
2016 թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Գիտահետազոտական պրակտիկան մագիստրոսական կրթության ծրագրերի պարտադիր բաղադրամասերից է: Գիտահետազոտական պրակտիկան նպատակաուղղված է աջակցելու ուսանողների՝ ստացած տեսական գիտելիքներն ամրապնդելու, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքի համար անհրաժեշտ ունակություններ ձեռքբերելու գործին:

2. Գիտահետազոտական պրակտիկայի նպատակները և հիմնական խնդիրները

2.1 Գիտահետազոտական պրակտիկայի **նպատակներն են՝** մասնագիտական գիտելիքների ընդլայնումը, սիստեմավորումը և ամրագրումը, մագիստրանտների մոտ ինքնուրույն գիտական աշխատանք, հետազոտություններ և փորձարկումներ կատարելու կարողությունների ձևավորումը:

2.2 Գիտահետազոտական պրակտիկայի **հիմնական խնդիրներն են՝**

- մագիստրանտների ծանոթությունը գիտական հետազոտությունների անցկացման մեթոդներին, գիտական աշխատանքի կատարման տարբեր փուլերին, գիտական որոնման տարբեր մեթոդներին, ինչպես նաև աշխատանքի արդյունքում ստացված տվյալների վերլուծության և սիստեմավորման, մագիստրոսական ատենախոսության համար դրանց օգտագործումը,
- մագիստրանտների կողմից փորձի ձեռքբերումը՝ արդիական գիտական հիմնախնդիրների ուսումնասիրման բնագավառում կոլեկտիվ գիտական աշխատանք կատարելու համար,
- տարբեր գիտական խմբերի և հետազոտողների հետ համագործակցելու ունակությունների ձեռքբերումը:

2.3 Գիտահետազոտական պրակտիկայի ընթացքում **ուսանողը պետք է ուսումնասիրի՝**

- մագիստրոսական ատենախոսության թեմային վերաբերվող գրական և պատենտային աղբյուրները՝ ավարտական որակավորման աշխատանքում օգտագործելու համար,
- հետազոտական աշխատանքների անցկացման մեթոդները և ձևերը,
- հետազոտությունների համար օգտագործվող սարքավորումների շահագործման կանոնները,

- փորձարարական տվյալների մշակման և անալիզի մեթոդները,
- գիտական հետազոտություններում օգտագործվող տեղեկատվական տեխնոլոգիաները,
- գիտական և գիտատեխնիկական նյութերի ձևակերպմանը ներկայացվող պահանջները:

2.4 Պրակտիկայի ընթացքում **մագիստրանտը պետք է կատարի՝**

- հետազոտության թեմայով գիտական և գիտատեխնիկական ինֆորմացիայի վերլուծություն, սիստեմավորում և ամփոփում,
- տեսական կամ փորձարարական հետազոտություն ատենախոսության թեմայով,
- ստացված արդյունքների հավաստիության վերլուծություն,
- անցկացված հետազոտությունների գիտական կամ գործնական նշանակության վերլուծություն:

3. Պրակտիկայի անցկացման տեղը և ժամկետները

3.1. Գիտահետազոտական պրակտիկական անցկացվում է մագիստրատուրայի երկրորդ կուրսի երկրորդ կիսամյակում: Պրակտիկայի տևողությունը կազմում է 2 շաբաթ՝ համաձայն մագիստրատուրայի ուսումնական պլանների:

3.2. Պրակտիկական կարող է անցկացվել մագիստրոսական ուսուցման ծրագրերն իրականացնող համապատասխան մասնագիտական ամբիոններում, ինչպես նաև այն պետական, հասարակական, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում, հիմնարկ-ձեռնարկություններում, որտեղ հնարավոր է ավարտական աշխատանքի կատարման համար անհրաժեշտ նյութերի ուսումնասիրությունը և հավաքումը:

3.3. Գիտահետազոտական պրակտիկական սկսվելուց առաջ մագիստրանտների հետ անցկացվում է ժողով՝ պրակտիկայի անցկացմանը վերաբերող հարցերի լուսաբանությամբ:

3.4. Գիտահետազոտական պրակտիկայի անցկացման նպատակով բոլոր մագիստրանտների համար նշանակվում են ղեկավարներ՝ համապատասխան ամբիոններից և պրակտիկայի անցկացման վայրից :

3.5. Գիտահետազոտական պրակտիկայի ընթացքում ուսանողի գործունեությունը պետք է համապատասխանի մագիստրանտի գիտահետազոտական աշխատանքի թեմայի նպատակներին և խնդիրներին:

3.6. Գիտահետազոտական պրակտիկայի ընթացքում ուսանողները ենթարկվում են պրակտիկայի անցկացման վայրի ներքին կարգապահական և անվտանգության տեխնիկայի կանոններին:

4. Պրակտիկայի բովանդակությունը

4.1 Գիտահետազոտական պրակտիկան իրականացվում է մագիստրոսական ատենախոսության հաստատված թեմայի շրջանակներում՝ հաշվի առնելով պրակտիկայի անցկացման վայրի հնարավորությունները:

4.2 Գիտահետազոտական պրակտիկայի բովանդակությունը որոշվում է մագիստրոսական ծրագրերի ղեկավարների կողմից՝ բարձրագույն մասնագիտական կրթության պետական չափորոշիչների հիման վրա և արտահայտվում է գիտահետազոտական պրակտիկայի անհատական ծրագրում:

4.3 Պրակտիկայի ընթացքում մագիստրանտների աշխատանքը կազմակերպվում է համաձայն մագիստրոսական ատենախոսության ուղղությամբ պլանավորված աշխատանքի՝

- հետազոտության նպատակների և խնդիրների ձևակերպում,
- տվյալ խնդրին վերաբերող գրական նյութերի ուսումնասիրություն և վերլուծություն,
- անհրաժեշտ նյութերի ընտրություն և սիստեմավորում (պատենտային գրականություն, կատարված գիտահետազոտական աշխատանքների հաշվետվություններ և այլն),
- հետազոտության անցկացման մեթոդների որոշում, աշխատանքի պլանավորում,
- պլանով նախատեսված աշխատանքների իրականացում,
- ստացված փորձարարական տվյալների վերլուծություն,
- հետազոտության արդյունքների վերլուծություն և ամփոփում:

5. Ուսանողի գործունեությունը պրակտիկայի անցկացման վայրում

5.1 Ուսանողի գործունեությունը պրակտիկայի անցկացման վայրում բաղկացած է հետևյալ փուլերից.

Փուլ 1-ին

- հետազոտության անցկացման աշխատանքային պլանի և գրաֆիկի կազմում գիտական ղեկավարի մասնակցությամբ (Հավելվածներ 1, 2):

Փուլ 2-րդ

- կոնկրետ խնդիրների և նպատակների ձևակերպում, ատասահմանյան և հայրենական գրականության մեջ տվյալ թեմային վերաբերող գրական տվյալների հավաքագրում (աշխատանք գրադարանում, նյութերի որոնում Ինտերնետի ռեսուրսներում), ամփոփում, վերլուծություն,
- փորձարարական աշխատանքների կատարում, տվյալների ամփոփում և վերլուծություն:

Փուլ 3-րդ

- անցկացված հետազոտության արդյունքների ամփոփում, ձևակերպում և համաձայնեցում՝ մագիստրոսական ատենախոսության գիտական ղեկավարի հետ:

6. Գիտահետազոտական պրակտիկայից սպասվելիք արդյունքները

- 6.1 գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանության հիմնական դրույթների իմացություն, մագիստրոսական ատենախոսության թեմայով աշխատանքներում դրանք կիրառելու կարողություն,
- 6.2 գիտական ինֆորմացիան հավաքելու, վերլուծելու և մշակելու ժամանակակից մեթոդներն օգտագործելու կարողություն,
- 6.3 հետազոտության թեմային վերաբերող նյութերը հաշվետվությունների, տպագրությունների, զեկուցումների ձևով շարադրելու կարողություն:

7. Պրակտիկայի արդյունքներով ներկայացվող նյութերը

- 7.1 Պրակտիկայի արդյունքներով մագիստրանտը ամբիոն է ներկայացնում.
 - մագիստրոսական ատենախոսության թեմային վերաբերող գրականության վերլուծությունը,
 - հաշվետվություն՝ փորձարարական աշխատանքների տվյալների վերլուծությամբ և ամփոփմամբ:
- 7.2 Գիտական ղեկավարի կողմից ստորագրված պրակտիկայի հաշվետվությունը ներկայացվում է մագիստրոսական ծրագրի ղեկավարին:

8. Պրակտիկայի անցկացման վերահսկողությունը

8.1. Պրակտիկայի անցկացման ղեկավարությունն ու վերահսկողությունն իրականացվում է ռեկտորի հրամանով նշանակված համապատասխան ամբիոնների մասնագետների կողմից:

8.2. Գիտահետազոտական պրակտիկայի ղեկավարը մեթոդական օգնություն է տրամադրում մագիստրանտին՝ կատարվող հետազոտության հետ կապված խնդիրների լուծման գործում:

8.3. Պրակտիկայի ղեկավարը՝

- համաձայնեցնում է գիտահետազոտական պրակտիկայի թեման, ծրագիրը մագիստրոսական ծրագրի ղեկավարի հետ,
- կատարում է անհրաժեշտ կազմակերպչական աշխատանք՝ պրակտիկայի ծրագրի կատարման ուղղությամբ,
- որոշում է կատարվող հետազոտության փուլերի հաջորդականությունը, պրակտիկայի անցկացման գրաֆիկը, ուսանողի աշխատանքային ռեժիմը,
- սիստեմատիկորեն վերահսկում է պրակտիկայի ընթացքը և ուսանողների աշխատանքը,
- օգնում է ուսանողներին՝ պրակտիկայի անցկացման և հաշվետվության ձևակերպման հետ կապված բոլոր հարցերում:

8.4. Գիտական ղեկավարը՝

- իրականացնում է պրակտիկայի խնդրի ձևակերպումը՝ մագիստրանտներին տրամադրելով անհատական առաջադրանքներ մագիստրոսական ատենախոսության համար անհրաժեշտ նյութերի հավաքման համար, տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվական օգնություն,
- տալիս է հանձնարարականներ՝ գրականության ուսումնասիրման և հետազոտության մեթոդների կիրառման ուղղությամբ:

8.5. Պրակտիկայի անցկացման ընթացքում մագիստրանտը՝

- ստանում է ղեկավարից պրակտիկայի կազմակերպման և անցկացման հետ կապված հանձնարարականներ, բացատրություններ և առաջարկներ, ներկայացնում է իր կատարած աշխատանքի հաշվետվությունը՝ պրակտիկայի անցկացման գրաֆիկին համաձայն,
- կատարում է հետազոտություններ ատենախոսության թեմայով՝ համաձայն պրակտիկայի ծրագրի և գրաֆիկի,

- կազմում է հաշվետվություն կատարած աշխատանքի արդյունքների ամփոփմամբ, ըստ սույն կարգի:

9. Պրակտիկայի արդյունքների ամփոփումը

9.1 Ատեստավորումը պրակտիկայի արդյունքներով իրականացվում է պրակտիկայի հաշվետվության արդյունքների և պրակտիկայի ղեկավարությունն իրականացնող դասախոսի գրավոր կարծիքի հիման վրա: Ատեստավորումը կատարվում է ստուգարքի ձևով (ստուգված/չստուգված) և հաշվի է առնվում ուսանողների միջանկյալ (կիսամյակային) ատեստավորման ժամանակ:

9.2 Պրակտիկայի պաշտպանությունից “չստուգված”, կամ անհարգելի պատճառով պրակտիկայից բացակայած ուսանողները հեռացվում են Համալսարանից:

9.3 Հարգելի պատճառով պրակտիկայից բացակայած ուսանողները պարտավոր են կրկնել այն դասերից ազատ ժամանակ:

ՄԱԳԻՍՏՐԱՆՏԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

(ԱԱՀ)

(մասնագիտությունը)

| 1 | Պրակտիկայի անցկացման ենթաբաժինը, աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետները | Նշում կատարման մասին |
|---|---|---------------------|----------------------|
| | | | |

Մագիստրոսական ծրագրի ղեկավար՝ _____

Ստորագրություն

Մագիստրանտ՝ _____

Ստորագրություն

**ՊՐԱԿՏԻԿԱՅԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՐԱՖԻԿ**

| Ամիս, ամսաթիվ | Կատարված աշխատանքի հակիրճ բովանդակությունը | Աշխատանքի արդյունքը | Պրակտիկայի անցկացման վայրի պատասխանատուի ստորագր. |
|---------------|--|---------------------|---|
| | | | |
| | | | |
| | | | |

Մագիստրոսական ծրագրի ղեկավար՝ _____

Ստորագրություն

Մագիստրանտ՝ _____

Ստորագրություն

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎ. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
ՖԱԿՈՒԼՏԵՏ՝ _____
ԱՄԲԻՈՆ՝ _____

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ

Պրակտիկայի անցկացման հիմնարկության անվանումը

Ուսանողի անուն, ազգանուն

Կուրս _____

Մագիստրոսական
ծրագրի ղեկավար

_____ “ _____ ” _____
ստորագր. (ԱԱՀ)

Ամբիոնի կողմից նշանակված
պրակտիկայի ղեկավար

_____ “ _____ ” _____
(ԱԱՀ)

ՎԱՆԱԶՈՐ
20 թ.

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ

**անցկացման հիմնարկության
կողմից նշանակված
պրակտիկայի ղեկավարի**

ԿԱՐԾԻՔ

_____ մինչև _____ ժամանակահատվածը
_____ ուսանողը (ուհին)

(ԱԱՀ)

անցկացրել է պրակտիկան _____
(կազմակերպության, բաժնի անվանումը)

Պրակտիկայի անցկացման ընթացքում _____
_____ ուսանողը(ուհին)
ուսումնասիրել է հետևյալ հարցերը.

Պրակտիկայի անցկացման ընթացքում ուսանողը (ուհին) իրեն դրսևորել է (տրվում է տվյալ ուսանողի՝ պրակտիկայի ընթացքում դրսևորած գիտելիքների, կարողությունների, ունակությունների գնահատումը

Պրակտիկայի ղեկավարի ստորագրություն _____

Մագիստրանտի ստորագրություն _____